... Ամէն կողմից մեզ շրջապատել է թուրքական վտանգը, սպառնական և յանդուգն. մեր քաղաքական ծրագրին հակառակ Թուրքիան առաջ է տանում իր ծրագրները Հայաստանի վերաբերմամբ, որոնց մէջ հայ տարրի ֆիզիքական բնաջնջումը էական և հիմնական կէտն է հանդիսանում, և մենք ոչինչ գրաւական և վստահութիւն չունենք, թէ անգլիական զօրահրամանատարութիւնը ցանկութիւն ու կարողութիւն ունի մեզ փրկելու այդ վտանգից, որը, կրկնում եմ ու պնդում. — այսօր էլ իրական է և սպառնական ոչ պակաս, քան ամիսներ առաջ:

Բրիտանական զօրահրամանատարութիւնը արգելեց մեզ գրաւել Հայաստանում որոշ կարևոր վայրեր, կարևոր թէ ստրատեգիական, թէ ռազմամթերքի (Կարսի պահեստները) տեսակէտով. այդ բոլորը մնաց թուրքերի ձեռին. մեր քայլերն ու ընթացքը կաշկանդուած են, թուրքերինը՝ ազատ. մեզ օգնող չկայ, թուրքերին աջակից են և ղեկավար Թուրքիան իր օֆիցէրներով (նոյնիսկ բարձրաստիճան), ռազմամթերքով և ռազմական ամէն տեսակ գործիքներով...

Կառավարութեան կողմից ձեր յատուկ ուշադրութիւնը հրաւիրելով այս փաստերի և հանգամանքների վրա՝ խնդրում եմ, որ ամենալուրջ դիմումներով ում հարկն է աջողեցնէք, որպէսզի.

1) Անդրկովկասից և Թիւրքիայի նախկին վիլայէթներից հեռացուեն չուտափոյթ թուրքական ուժերն ու զօրականները սպառնալով, որ այդ ուժերի կողմից որև է զինուած գործառնութեան դէպքում պատիժ և պատասխանատուութիւն կը կրի Թիւրքիան:

2) Թէկուզ փոքր զօրամասեր (անգլիական, ֆրանսիական, ամերիկեան) ուղարկուեն Տրապիզոն—Էրզրում—Սարիղամիշ—Կարս—Նախիջեւան Ջուլֆա—Շուշի. Կարսում և այլ տեղերում եղած անգլիական զօրախմբերը դէմօբիլիզացիայի են ենթակայ և հեռանում են):

3) Աջակցեն մեր զօրքերի կազմակերպմանը և սպառազինմանը (փամփուշտ, հրացան, գնդացիր...):

4) Հայաստան փոխադրեն հայ զօրամասերին և զօրականներին զանազան երկրներում ներկայումս գտնուող՝ օժտելով նրանց հարկ եղած ռազմական միջոցներով և նիւթերով:

Այս մասին Ձեզ նաև հեռագրում ենք՝ խնդրի ստիպողականութիւնը աչքի առաջ ունենալով»:

Իսկ խնդիրը, իրօք որ, ստիպողական էր: Հայաստանը խեղդւում էր՝ կծկուած նեղ լեռներում ու ձորերում: Գարունը վրա էր հասնում. պէտք էր գաղթականութիւնը վերադարձնել իր տեղերը, ցանքս անել յաջորդ տարւայ համար, կառավարութիւնը ազատել խնամատարի ու որբապահի դերերից: Այդ էր պատճառը, որ հայկական ներկայացուցիչները ոմբակոծում էին դաշնակիցներին հեռագրներով ու յուշագրերով՝ պահանջելով անմիջական կարգադրութիւն Հայաստանի սահմանների ընդարձակման համար:

Ապրիլ ամսից սկսած, Անդրկովկասի անգլիական հրամանատարութեան քաղաքականութիւնը զգալի կերպով փոխուեց յօդուտ հայերի, և Հայաստանի սահմանների ընդարձակման խնդիրը ստացաւ նոր մղում: Հայկական կառավարութեան և անգլիական բարձր հրամանատարութեան համաձայնու-